

իշխանութիւնը ստանալէ ետքը ելաւ քարոզութեամբ շրջելու եւ հասաւ Դաւրէժ շահաստանը: Հոն հողը բերրի դանելով՝ դադար առաւ. «յամենայն աւուր քարոզիւ եւ դասիւ եւ յորդառատ վարդապետութեամբ լուսաւորէր զժողովուրդն» (Դաւր. 266):

Պօղոս վարդապետ անձամբ «սուրբ էր եւ առաքինի, հանապազօր սաղմոսերդ». հրաժարած էր գինիէ եւ մսէ. կ'սպրէր ժուժկալ եւ խոտամբեր կեանք մը. միայն շարաթ եւ կիրակի թոյլ կու տար անձին ճաշակել նաւակատեաց կերակուր, մնացեալ օրերը «կեայր պահօք»: Ուխտած էր խիստ աղքատութիւն. անարժաթ կը քարոզէր. ոչ մէկէ չէր առներ ինչք կամ ստացուածք. եւ եթէ ժողովուրդը բարեսրտութեամբ ղնէր իր ձեռքը արծաթ, կա՛մ կարօտեալներու կը բաշխէր կա՛մ գեթեաց աղատութեան կը գործածէր եւ կա՛մ եկեղեցիներ շինելու կը ծախսէր: Կը ճանապարհորդէր հետիոտս, ուր ալ երթար: Ամէն շարաթ կը կանխէր եկեղեցի եւ հսկմամբ կը լուսացնէր կիրակի առաւօտը: Ժամասացութիւնը ի ըման կը պաշտէր. եւ ինչպէս Դաւրիժեցի առանձինն կը շեշտէ՝ «ղՅիշեսցուքն, զԿանոնադրուխն, զԱլէլուին խաղով ասէր հանգերձ ութ կանոնաւ սաղմոսին. եւ յառաւօտուն զվերկական խորհուրդ պատարագին մատուցանէր»: Այս պատճառաւ ալ ժողովուրդը՝ ոամիկ թէ վաճառական շատ կը սիրէին եւ կը յարգէին զինքը պարկեշտ վարքին համար:

Դաւրէժ թէպէտ կար ժամատուն մը,